



Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 33_L

06 դեկտեմբերի 2022 թվական

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՀԻՍՈՒՆ ՄԻԼԻՈՆ ՀՀ ԴՐԱՄԻ ՍԱՀՄԱՆԱԶԱՓԸ ԳԵՐԱԶԱՆՑՈՂ ՄԻ ՇԱՐՔ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 42-րդ կետի 17)-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.4 կետի 17)-րդ ենթակետով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը **որոշում է**.

1. հաստատել ՀՀ գնումների օրենսդրության պահանջներին համապատասխան կնքված Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կարիքների համար ԵՊՀ ՈՒԱԲ-ի վերանորոգման աշխատանքների կատարման 135 000 000 ՀՀ դրամ արժողությամբ գնման թիվ ԵՊՀ-ԲՄԱՇՁԲ-22/162 պայմանագիրը՝ համաձայն հավելված 1-ի:

2. հաստատել ՀՀ գնումների օրենսդրության պահանջներին համապատասխան կնքված «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կարիքների համար կապալային աշխատանքների կատարման 68 643 318 ՀՀ դրամ արժողությամբ գնման թիվ ԵՊՀ-ԲՄԱՇՁԲ-22/165 պայմանագիրը՝ համաձայն հավելված 2-ի:

3. հաստատել ՀՀ գնումների օրենսդրության պահանջներին համապատասխան կնքված «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կարիքների համար ապրանքի մատակարարման 64 999 800 ՀՀ դրամ արժողությամբ գնման թիվ ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-22/159-1 պայմանագիրը՝ համաձայն հավելված 3-ի:

4. հաստատել ՀՀ գնումների օրենսդրության պահանջներին համապատասխան կնքված «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կարիքների համար ԿՄՕ-22 ժյուրիի անդամների և մասնակիցների համար հյուրանոցներում բնակվելու ծառայությունների մատուցման 84 798 000 ՀՀ դրամ արժողությամբ թիվ ԵՊՀ-ԲՄՇՁԲ-22/12 պայմանագիրը համաձայն հավելված 4-ի:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հոգաբարձուների խորհրդի նախագահ՝

Ս. Պապիկյան

2022թ. դեկտեմբեր «06»

Երևան